



103. ԷՐԿՈՒ ՅԸՆԿԵՐ

էրկու չընկեր կէղնին, իմալ մորեմեկ:
էն մեկ չընկեր օր մե կը թողե կէրթա ուրիշ թագավորութենի
հող, ընդոր բախտ կը բերե, կը դառնա էդ էրկրի թագավորի նաղիր-
վաղիր: Մեկել չընկեր կը մնա գեղ, հոտաղ-մշկութեն կէնե, ուր տուն
ու տեղ կը պահե, հարի ուր տղեկներ կը հասու:

Մարդ մըջեմ մե կոխե՝ աշխըրով-աշխար գիմնան, մկա մարդ
գացի, դարձեր է նաղիր-վաղիր, էդի էղա՞ծ բան է օր շիմնան:
Ըդոր անուն կը ձենձնվի, քաղքե-քաղաք, գեղոց-գեղ կը խոսան,
թե Ֆլան գեղի Ֆլան նախորդի տղեն դարձեր է նաղիր-վաղիր, էր-
կիր կը կառավարե:

— Տո՛,— կըսե օր մե գեղի չընկեր,— իմ աղեկ չընկեր գացի-
դառձի նաղիր-վաղիր, աշխար կը կառավարե, կանի չելնամ էրթամ
զէգի տեսնամ՝ սանք ի՛մալ է, կարոտսի առնիմ, դառնամ, գամ:

Կըսե, ուր ճամպու պաշար կը տեսնա, գընկնա ճամպա, կէրթա,
կէրթա, կը հասնի էն թագավորութենի հող, կը կանի քոշկ ու սա-
րիմ՝ չառջե, կը տեսնա հանդե էրկու մարդ, գլուխն ուրանց փաթուկ,
մզըրխներն ի ձեռ՝ կանուկ ին վըր դառն-դարգին, իսան շիշխընա
մոտենա: էդի սիրտ կէնե, կը մոտենա:

— Ի՞նչ դուզիս:

— Գուղիմ գձեր նաղիր-վաղիր տեսնամ:

էդ կանուկներ զփոր ուրանց բռնած՝ կը ծիծղան: էն մեկ կըսե.

— Զքու խլըխ իշկե՞, էդ խլըխով ի՛մալ կէրթաս մըտ նաղիր-
վաղիր:

— Տո՛, շա՛նըմ,— կըսե գեղացին,— ձեր նազիր-վազիր ի՞մ էրեխութենի շընկերն է, մենք հըտ չիրար հոտաղ ինք էղի, տավար ինք արծըցուցի, լուծք ինք էրի, քաղ ինք էրի, հացի թիքեն մրջ յիրար բաժներ ինք, շատ լե նազիր-վազիր է, ի՛մալ գիսի շընդունն:

Օր կը գաբշտին՝ խալմախալ կը բանձըրնա, վըր խալմախալին՝ քոշկի ներսեն մարդ մե գիկա, զբանի էութեն գիմնա, կառնե ըդրան. կը տանե մըտ նազիր-վազիր: Մարդ կը մտնա քոշկ ու սարեն՝ կը մուրի՛ շը գինա ի՛մալ քելե, յո՛ւր էրթա: Դուռ վըր դռան կը բացվի, կէրթա, կէրթա՝ կը հասնի վերջին չոգեն, կը տեսնա հանդե ուր չընկեր, նազիր-վազիրի շորեր հագուկ՝ նստուկ է վըր աթոռքին: Կը մոտենա, օր գրկե, պագե, նազիր-վազիր իդոր ետ կը հլոնդե, հմալ ցուց կիտա, թե շը ճանչնա:

— Ի՞նչ գուզիս,— կը հարցու նազիր-վազիր:

— Էկիր իմ զքզի տեսնամ, կարոտսի առնիմ:

— Դու ո՞ն իս, զքզի շըմ ճանչնա:

— Տո՛, յա՛, աո՛, խուպուկ-գոթեցուկ, դու գիսի շըս ճա՞նչնա. էդ չորի՞ն Հուդի պես զքու չընկեր կուրանաս:

Նազիր-վազիր ճոտուն շը հանե, աչքով կէնե, օր զդոր դու: Էնին: Գեղացի չընկեր շատ կը կոտորվի, կըսե:

— Հե՛յ գիդի աշխա՛ր, օդորդ կըսին, օր աթոռք զմարդ կը փոխե: Դու քոռցեր իս, դքու մոտ չընկեր բիւա շըս ճա՞նչնա. էկա, օր քու աչաց լուս տենք, տվի զէդ լուս, մկա կը տեսնաս, շըս տեսնա՛ ընձի մեկ հաշիվ է,— կըսե, կը դառնա գիկա ուր գեղ:

